ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Յուրաքանչյուր ժողովրդավար երկրի հիմքը Քաղաքացին է, որտեղ նա հանդիսանում է լեգիտիմ իշխանության միակ աղբյուրը:

Իրավագիտակից և առողջ գաղափարախոսությամբ սնված քաղաքացին է հանդիսանում այն հասարակության հիմքը, որից սնվում է պետությունը:
Տոնի խորհուրդը Հայաստանի Հանրապետության քաղաքացու դերի բարձրացումն ու վերջինիս արժեքի վերագիտակցումն է:

Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է գիտակցել, որ հենց ինքն է Հայաստանի Հանրապետության լիիրավ տերը, իր ձեռքերում է ինչպես իշխանությունը, այնպես էլ իր ուսերին է դրված այն շենացնելու, պաշտպանելու ու կերտելու սրբազան պարտականությունը:

Սիրելի՛ քաղաքացիներ, զինվեք ողջախոհությամբ, մոտեցեք ձեր Հայրենիքին տիրոջ հոգատարությամբ և հաստատակամությամբ, դարձեք ձեր պետության և պետականության կերտողն ու շենացնողը:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան